# ՆԻՒԹԵՐՈՒ ՅԱՆԿ — INHALTSVERZEICHNIS

## ԾԶ. ՏԱՐԻ — LVI. JAHRGANG

## 1942

(ԱՍՏՂԱՆԻՇՆԵՐԸ [*] ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՆ)

Գասապեան Ն.՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլղարիա 70—83, 239—256:

Էսապալեան Դկտ. Հ. Պ., Երկինք 198—202:

— — Պահլաւերէն Սաղմոսարանը 61—69:

Ինգլիզեան Դկտ. Հ. Վ.՝ Հայաստան սուրբ Գրքի մէջ 1—9, 137—149:

Ոսկեան Դկտ. Հ. Հ., Անձեւացեաց, Բոդունիքի, Երուանդունիքի եւ Աղբակի վանքերը 161—198:

— — Գողթնի վանքերը 23—61:

— — Մալարդայ Նախավկայի վանքին կոնդակները 83—128:

— — Սարդիկէի ժողովքի հայերէն կանոնները 203—240:

Տաշեան Հ. Յ.՝ Հին Հայաստանի արեւմտեան սահմանը՝ Փոքր Հայք եւ Կողոփենէ (Սեբաստիա) 9—22, 149—161:

* Արքեպիսկոպոսական Օծման Հանդէս Ամենապատիւ եւ Գերապայծառ Տ. եւ Հ. Մեսրոպ Վ. Հապոզեանի, Ընդհանրական Աբբայի Մխիթարեանց ի Վիեննա 129—136:

**Gassabian N.:** Katalog der armenischen Handschriften in Bulgarien 70—83, 239—256.

**Essabalian Dr. P. P.:** Armen. „*Erkink'*"  198—202.

— — Armenisch-persische Lehnwörter im Pehlevi-Psalter 61—69.

**Inglisian Dr. P. V.:** Armenien in der Bibel 1—9, 137—149.

**Oskian Dr. P. H.:** Die Klöster in Anjewacik', Bodownik', Erowandownik' und Ałbak 161—198.

— — Die Klöster in Gołt'n 23—61.

— — Die Patriarchalschreiben zugunsten des Klosters des Protomartyrs Malard 83—128.

— — Die altarmenische Übersetzung der Kanones von Sardika: Text und Untersuchung 203—240.

**Dashian P. J.:** Die westliche Grenze des alten Armenien: Armenia Minor und Colophene (Sebasteia) 9—22, 149—161.

* Die Feier der Weihe zum Erzbischof Sr. Exzellenz Mgr. Mesrop Habozian, Generalabt der Mechitharisten-Kongregation in Wien 129—136.

# ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՄԱՆ ՀԱՆԴԷՍ

## ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ

## Տ. ԵՒ Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՀԱՊՈԶԵԱՆԻ

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ Ի ՎԻԵՆՆԱ



Տարւոյս 13 Սեպտեմբեր թուականը Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Տարեգրքին մէջ օր մը չէ՝ ամբողջ պատմութիւն մըն է բազմապատիկ ու բազմատեսակ բաղձանքներու եւ իղձերու ձոյլ իրականացման: Այդ յիշատակելի թուականին Մխիթարեան Միաբանութիւնը ունեցաւ հոգեկան մեծագոյն հրճուանքը տեսնելու իր Առաջնորդն ու Գլուխը՝ Ամենապատիւ Գերպ. Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան Բարձրեալի խորանին առաջ Եպիսկոպոսներու կարգին մէջ իբր նորօծեալ Արքեպիսկոպոս տիտղոսաւոր Կամախու:



© National Library of Armenia